ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 194

03 մայիս 2021թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 74-Ն որոշումը և համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 14-ի թիվ 04 որոշումը, ինչպես նաև Ծաղկաձոր համայնքի բնակիչ Պավել Գմուկասյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Քաղաք Ծաղկաձոր, Չարենցի փողոց, թիվ 7/1 հասցեի բնակիչ <<Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի>> ուսանող Պավել Յանի Գմուկասյանին տրամադրել դրամական օգնություն 80 000 (ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ ուսման վարձը վճարելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 195

04 մայիս 2021թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 114 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2021 թվականի փետրվարի 26-ի << Հողամասին հասցե տրամադրելու մասին>> թիվ 114 որոշման մեջ <<21>> թիվը փոխարինել <<19>> թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ *03001885*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 196

04 մայիս 2021թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 191 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 26-ի << Ինքնակամ կառույցը օրինականացնելու, ինքնակամ կառույցը և հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին, համայնքի ղեկավարի որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 191 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում <<21>> թիվը փոխարինել <<19>> թվով,

2) որոշման 2-րդ կետում <<պարիսպը>> բառը փոխարինել <<բնակելի տունը>> բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 197

06 մայիս 2021թ.

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 22-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 25-րդ կետի 1-ԻՆ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ,հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի գլխավոր հատակագծի պահանջները,2006 թվականի հունիսի 6-ի Ծաղկաձոր համայնքի ավագանու թիվ 3/1 որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասը չի առնչվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերին,չի գտնվում օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքում, նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դասակարգմամբ բարձր և բարձրագույն ռիսկայնության օբյեկտների կառուցման համար, նախատեսված չէ պետական բյուջեի(այդ թվում՝ պետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ օբյեկտների կառուցման համար՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաշվի առնելով համայնքի գլխավոր հատակագծի պահանջները՝ Ծաղկաձոր համայնքում Կարապետ Վազգենի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող, համայնք Ծաղկաձոր Տանձաղբյուրի փողոց թիվ 9 հասցեում գտնվող, 0,24 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը բնակավայրերի հասարակական կառուցապատման համար նախատեսված հողերից փոփոխել հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված հողերի:

2.Սույն փոփոխությունը կատարել նաև համայնքի կադաստրային քարտեզում:

3.Հողամասի վրա Կարապետ Վազգենի Ասատրյանի կողմից կառուցված շինությունը համարել հասարակական նշանակության շինություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 198

06 մայիս 2021թ.

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Կարապետ Ասատրյանի սույն թվականի հունվարի 27-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Ծաղկաձոր համայնքի Տանձաղբյուրի փողոց թիվ 9 հասցեում գտնվող, Կարապետ Վազգենի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված ընդհանուր 460,97 քառ.մ արտաքին մակերեսով շինությունները:
2. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Շինության օրինականացման համար սահմանել վճար՝ 2 397 044 (երկու միլիոն երեք հարյուր իննսունյոթ հազար քառասունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, որը անհրաժեշտ է վճարել 900125002478 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 199

07 մայիս 2021թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԵՎ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Կեչառիս Հոթել>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /գործունեության հասցեն՝ ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների փողոց, թիվ 20/ տրամադրել՝

1) 2021 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն՝ 704 քմ տարածքում,

2) 2021 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքի վաճառք կամ իրացման կազմակերպելու թույլտվություն՝ 704 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 200

07 մայիս 2021թ.

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Սոս Հակոբյանի սույն թվականի հունվարի 29-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Ծաղկաձոր համայնքի Եղիշե Չարենցի փողոց թիվ 29 հասցեում գտնվող, Սոս Սերյոժայի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված 72,44 քառ.մ արտաքին մակերեսով առևտրի սրահը:
2. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 30 օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Շինության օրինականացման համար սահմանել վճար՝ 376 688 (երեք հարյուր յոթանասունվեց հազար վեց հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որը անհրաժեշտ է վճարել 900125002478 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 201

11 մայիս 2021թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԱՊՐԻԼԻ 28-Ի ԹԻՎ 192 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 28-ի << Հողամասին հասցե տրամադրելու մասին>>, համայնքի ղեկավարի թիվ 192 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման մեջ <<63>> թիվը փոխարինել <<64>> թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 202

11 մայիս 2021թ.

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով `

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ ձեռնարկատեր Գևորգ Սուրիկի Մարտիրոսյանին /գործունեության հասցեն՝ ք.Ծաղկաձոր, Չարենցի փողոց, թիվ 40/ տրամադրել՝

1) 2021 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 24.5 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 203

12 մայիս 2021թ.

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշումներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ծաղկաձոր համայնքի Պահլավունյաց փողոց թիվ 30/1 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի վրա Սոնա Օնիկի Սիմոնյանի կողմից ինքնակամ կառուցված 25,17 ք.մ. արտաքին մակերեսով շինությունները և շինությունների սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ 0,03152 հա մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Նշված 25,17 ք.մ. արտաքին մակերեսով շինությունները ճանաչել օրինական և առաջարկել Սոնա Օնիկի Սիմոնյանին գնել իր կողմից կառուցված շինությունը և զբաղեցրած հողամասը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 204

12՝ մայիս 2021թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ծաղկաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0,03152 հա մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինությանը տրամադրել հասցե՝ մարզ Կոտայքի, համայնք Ծաղկաձոր , Պահլավունյաց փողոց թիվ 30/1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 205

14 մայիս 2021թ.

ԱՐՇԱՎԻՐ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով,Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Արշավիր Առաքելյանի 2021 թվականի հունվարի 26-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արշավիր Ժիրայրի Առաքելյանին օտարել Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների նրբանցք թիվ 19 հասցեում գտնվող,(վկայական համար 07052021-07-0024, կադաստրային ծածկագիր 07-005-0003-0061) Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին չդասվող, բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված 0,002289 հա մակերեսով հողամասը՝ 103 554 (հարյուր երեք հազար հինգ հարյուր հիսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամով և իր կողմից կառուցված 49,47 ք.մ արտաքին (41,2 ներքին) մակերեսով բնակելի տունը՝ 385 866 (երեք հարյուր ութսունհինգ հազար ութ հարյուր վաթսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամով:

2. Արշավիր Ժիրայրի Առաքելյանի հետ կնքել շինության և հողամասի օտարման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՎԱԳԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ *03001885* ՀԱՅԱՍՏԱՆ ԷՋ